



91. ԴԵՐԻՆ ԱՂՈՏԿԸ

Մին անգրագետ դեր ա ինքնամ մին շենում։ Մին օր էջմիածնան մին վարթաբեղ ա կյամ, վըեր տըեսնա, թա տա հունց ա մըեռալ թաղում, հըրսաներյ անում, աղոտկ անում։ Դերը վարթաբեղին նհետ քյինամ ա ժուղովուրթը հըվաքուր, ասում. —Ա՛ ժուղովուրթ, գյուղում ը՞ք հինչ կաւ ժուղովուրթին ասում ըն. —Զէ՛, գյուղում լընք, Դերն ասում ա. —Դե վըեր գյուղում լըք, քյեցեք ծեր պինին։ Տահանք ետ ըն տըեռնում, քյինամ։

Էքյսի օրը նորից ըն ժուղովուրթին հըվաքում, էլլա դերը հըրցնում ա. —Ա՛ ժուղովուրթ, գյուղում ը՞ք՝ հինչ կաւ Հըվաքած մարթիքյ ասում ըն. —Հա՛, գյուղում ընք, Դերն ասում ա. —Դե վըեր գյուղում ըք, էլ հինչ ա՞սեմ, քյեցեք ժուղովուրթը քյինամ ըն։

Մին օր անց կացած, վըեր վըրթաբեղը նան գերը նորից ըն ժուղովուրթը հըվաքում, էս դոնում սահանք պայմանավորվում ըն, վըեր գերը թա էլլա էտ պինը հըրցնե, կեսն ասեն գյուղում ընք, կեսն էլ ասեն գյուղում լընք, Խորի յէլ անում ըն։

Էքյսի օրը վըեր ժուղովուրթը հըվաքում ըն, դերը նորից ա հըրցնում, թա գյուղում ը՞ք հինչ կաւ կեսն ասում ըն գյուղում ընք, էն մին կեսն էլ ասում ըն՝ գյուղում լընք, էս դոնում դերը ետ ա տըեռնում, ասում. —Հու գյուղում լի, թող քյինա գյուղուդ մարթուցն անա հըրցնե։ Խորի ասում ա, թողում քյինամ։

Էն մին օրն էլ ժուղովուրթը վըեր հըվաքում ըն, դերն ըսկըսում ա աղոտկ անելը, Դե էլ տառ լի ճինանչնեմ, վըեր սաղ-

մոս յա շարական կարթի, ըսկսում ա ինքին ուրան խռովելը, քթեն
տակեն մըոմըուամ ա, ասում.—Երգիինքավը մին զուշ ա քլինամ՝
տեղեն ա, տեղեն ա, ալելույա, ալելույա...

Վըեր դերը նորից ա ասում՝ տեղեն ա, տեղեն ա, վըրթա-
րեղն էլ ետ ա տընոնում ասում.—Խստի ժուղովուրթեն վըեր կաշին
էլ մաշկեն, տեղեն ա, տեղեն ա...

